

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Բաճախիչ. գիտ. ղեկավար Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա ծ ու

Բառը վկայված է V դարից, բայց հաճախական չէ։ Հանդիպում է Աստվածաշնչում՝ Սիրաքի գրքում¹։ «Արբուցից զածուն»։ Մյուսը՝ Խորենացու հայտնի օրինական է. «Զի թէպէտ ե հմք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ...»²։

Աստվածաշնչի վկայության հիման վրա նոր հայկազյան բառարանը (այսուհետև՝ ՆՀԲ) բառը մեկնում է «մասն արտոյ կամ պարտիզի, ուր լինի ածք կամ բոյսը ընտանի բանջարոց», իսկ Խորենացու վկայության մեջ բառարանը տեսնում է «ազգ սակավաթիւ, փոքր աշխարհ» իմաստը։ Արմատական բառարանը երկու վկայությունների մեջ իմաստային զանազանություն չի նկատում. «պարտեղի մեջ հողի մշակված փոքր բաժանմունքներ»³։ Արդի հայերենի բացատրական բառարաններում նույն մեկնությունն է՝ իմաստային տարբեր հրանգների հաշվառումով⁴։ Ածու-ի ստուգաբանությունը տարակարծությունների տեղիք չի տվել, և ենթադրվում է ածել-ի հիմքից կազմված ձև⁵։

Մեր կարծիքով ածու-ի համար կարելի է առաջարկել նոր ստուգաբանություն։

Ածու-ի գրաբարյան օրինակներում առկա է «հող», «հողակտոր», իմաստի լայնացմամբ՝ «երկիր» (Խորենացու վկայության մեջ)։ Այս հանդամանքը թույլ է տալիս ածու-ի մեջ տեսնելու այն արմատը, որը հունարենում ներկայանում է ἀγρός, լատ. ager, agri։ Հունարեն համապատասխան բառը ունի՝ 1. դաշտ, վարելահող, 2. գյուղական վայր, գյուղ, լատիներենը՝ հող, մարզ, տարածք, վարելահող, հարթավայր, գյուղ իմաստները։ Հունարեն և լատիներեն բառերը ծագել են հ.-հ. *agʷro-ից, որից ենթադրվում է հայ աբա՝ հնչյունափոխության որոշ դրսևորումներով⁶։

Հ.-հ. *agʷro հայերենում կներկայանա *ածռ ձևով (հմմտ. հ.-հ. meġʾə կամ meġʾa հայ. մեծ, հուն. μέγας, μέγα և այլն)*։ Ածռ-ը գիտակցվել է ր-

¹ Սիրաքի գիրքը ներառող Աստվածաշնչի ոչ բոլոր հրատարակություններում է բառը առկա. բերում ենք ՆՀԲ-ի վկայությունը։

² Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց. Երևան, 1981, էջ 12։

³ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ Արմ). ածել բառահոգվածք։

⁴ Ստ. Մալխասյանի բառարանում՝ «1. բանջարանոցի մաս, որ սահմանված է բույսի սերմերն աճեցնելու, որից հետո փոխադրում-տեղում են ուրիշ տեղ, 2. բանջարանոցում քառակյունի ձևով կտրված մաս, որ հատկացվում է մի տեսակ ընդեղեն ցանելու, կորի, 3. փխր. նոր զարդանալ սկսող աղբ»։ Աղայանի բացատրական բառարանում համարյա նույնն է, միայն վերջին՝ փոխաբերական իմաստը՝ «փոքր երկիր, ժողովուրդ»։

⁵ Տե՛ս Արմ., ածել բառը։

⁶ Տե՛ս Արմ., աբա բառը։

հիմքով ձև, որը կարող է փոխվել ու-հիմքի. հմմտ. մեղր-մեղու, Բաղդ-Բաղդու...⁷:

Ածու-աբտ (նաև աղաբալ) բառերի իմաստային ընդհանրությունները հաստատում են ածուի հ.-ե. վերահիշյալ արմատից լինելը⁸:

Ա լ ա գ

Բառի «մեծ, մեծադույն, երեց, երիցադույն, մեծապատիվ, երևելի, իշխան, պետ» իմաստներն է նշում ՆՀԲ-ն, իսկ Արմ-ը՝ մեծ, երևելի, պատվական⁹: Հետագայում բառը հանդես է գալիս նաև որպես անձնանուն: Արմատական բառարանում բառը ստուգաբանված է: Ստուգաբանությունն ուր փորձ մեղ ծանոթ է:

Թվում է, բառը իրանական ծագում ունի և առնչվում է (a)vāk-vāc «բառ խոսք, ձայն» արմատի հետ: Կ-ց հնչյունափոխությունը օրինաչափորեն դործել է իրանական լեզուներում¹⁰, և այն արտացոլված է նաև հայերենի իրանական փոխառություններում. հմմտ. հայ. նուագ-ը: Ինչ վերաբերում է բառի իմաստային կողմին, ապա պետք է կարծել, որ առաջը «խոսք, խոսել, ձայն»-ի իմաստային զարգացումն է՝ «խոսելու ձայնի իրավունք ունեցող», «առաջինը խոսող կամ խոսողներից առաջինը» նրբիմաստային հենքով: Նման անցումներ այլ լեզուներում առկա են. ֆր. parler «խոսել»-parlement «խորհրդարան, պարլամենտ», անգլ. speak «խոսք»-speaker «խոսնակ, խորհրդարանի նախագահ», լատ. oro «ասել, խոսել»-orator «ճարտասան», նաև՝ «բանավոր հանձնարարությունը դեսպան» պրս. āvaz «ձայն, կանչ» (նույն (a)vāk արմատն է) — avaze «փառք, հռչակ»:

(a)vāk իմաստային զարգացման այլ օրինակներ էլ կան avāc տարբերակի դեպքում (Կ-Շ հնչյունափոխությունը նույնպես օրինաչափ է իրանական լեզուներում): Արմատի այս տարբերակը հայերենում առկայանում է ամբարձրաձայն «բարձրամիտ, փառասեր», բարձրաձայն «պանծալի, փառավոր, անվանի», նուաճել «ընկճել, տիրել»: Ըստ է. Աղայանի բարձրաձայն բառի մեջ առանց նշանակել է «համբավ, հռչակ», ուստի և ամբողջ բառը նախապես ունեցել է «շատ հռչակված, մեծահամբավ» իմաստները¹¹: Իսկ նուաճ- *ti-vācāh պետք է նշանակած լինի «խոսքի տակ գցել, իր խոսքին ենթարկել, ապահովություն, երաշխիք ունենալ»¹²:

Ընդհանրապես խոսք, բառ, բան իմաստային այլևայլ զարգացումները բնորոշ են շատ լեզուների՝ դրսևորելով դանազան նրբերանգներ, փոխանցման աստիճաններ: Օրինակ օսերենում իր. vāk|vāc-ը ունի նաև կրոնական երանդ (ինչպես լոգոսը) և ծառայում էր որպես քրիստոնեական սրբերի մականորդ. Wac Jila «սուրբ Եղիա», Wac Gergi- «սուրբ Գևորգ» և այլն¹³: Այս փաստը հաշվի առնելով՝ վ. Աթաբեկը նկատում է, որ «նախաքրիստոնեական Օսիայում wac-ը պաշտամունքային հիմնական հասկացություններից մեկն

7 Ըստ Գ. Զահուկյանի «սկզբնապես թե՛ «մեղր», թե՛ «մեղրագին» նշանակող և որոշ տեղերում միայն վերջին իմաստով գործածվող՝ medliu բառի կողքին հանդես է եկել նաև միայն «մեղր» նշանակող mēlt բառը» (Գ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն (նախադրային շրջան). Երևան, 1987, էջ 106):

8 Ըստ Արմ-ի ազգակերպ փոխառված է փոքրասիական հ.-ե. մի կորած լեզվից:

9 Sht. Основы иранского языкознания. Среднеперсидские языки. М., 1981, с. 30.

10 է. Աղայան. Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ. Երևան, 1974, էջ 41:

11 Նույն տեղում, էջ 126:

12 В. Абаев. Скифо-сарматские наречия. (Основы иранского языкознания древнеиранские языки). М., 1979, с. 706.

էր: Այդ հասկացությունը բոլոր տվյալներն ուներ մտնելու նախաքրիստոնեական շրջանի անձնանունների մեջ»¹³: Աբաևը ծանոթագրում է, որ Ավեստայում ՎՁԸ-ը առկայանում է երկու առասպելական քույրերի անուններում¹⁴: «Այս օրինակները ցույց են տալիս,—ընդհանրացնում է Վ. Աբաևը,—որ vac նշանակում է ոչ միայն, բայց, այլև մի բարձր «աստվածային ուժ»¹⁵:

Խոսք→մեծ իմաստային փոխանցումներից կարող ենք նշել նաև հայ. «խոսքը մեծինն է» արահայտությունը: Հայ. բառ բառից ունենք՝ բառացի, որն ըստ նշմ-ի նշանակում է «մեծանուն, մեծատուն, ճոխ, անվանի, հռչակավոր»: Այստեղ ևս ակնհայտ են հայ. բառ/խոսք և իրան Ձ(ՎՁԸ)-ի իմաստային ընդհանրությունները, ավագ բառի հետ ունեցած հարաբերությունը:

Գալլախագ

Գրաբարում հաճախական չէ: Բառը առկա է մեկ-երկու վկայությամբ՝ Աստվածաշնչից. «Եւ առեալ Սեպտիմիայի գալլախագ թլփատեաց զանթլպատութիւն որդւոյն իւրոյ» (Նլք. Դ. 25): «Ընդ այնու ժամանակաւ ասէ տէր յՀեսու, արա դու քնդ սուր ի գալլախագ վիմէ և նստեալ թլպատեսցես զորդիսն Իսրայելի կրկնակի» (Յեսու. Ե. 2.): «Փոր նորա վահանք պղնձիք, յօդք նորա իրրեւ զվէմ դալլախագ» (Յովք. ԽԱ. 6):

Աստվածաշնչում վկայված է և գալլախագեայ ձևը, որը նշմ-ն մեկնում է «սայրասուր կամ ի դալլախագ վիմէ հատեալ»: «Եւ արար իւր Յեսու սուրս քարեղէնս դալլախագեայս» (Յեսու. Ե. 3): Հեսուի գրքի մի այլ հատվածում գալլախագեայ բառը չկա. «Եւ անդ եղին ընդ նմա՝ ուր թաղեցին զնա առ ի յիշատակէ զսոսոսն Բաբելոնս (ընդգծումը մերն է—Լ. Հ.), որով թլպատեաց զորդիսն Իսրայելի ի Գաղգայ» (Յեսու. ԻԴ. 342):

Վերը բերված օրինակներից ակնհայտ է դառնում, որ գալլախագը կարծր քար է, որով հին հրեաները նաև թլպատում էին: Եբրայական և հունական բնագրերում գալլ (կենդանի) բաղադրիչով բառ չկա, այն չկա նաև այլ լեզուներով Աստվածաշնչի թարգմանություններում. օրինակ (Յեսու. Ե. 3)-ի համապատասխան նախադասությունը ռուսերեն թարգմանված է. «И сделал себе Иисус острые (каменные) ножи и обрезал сынов Израилевых». Նշմ-ն բառը մեկնում է «որձաքար կամ վէմ կարծր, որ ի սուրբ գիրս ըստ յն. անխտիր գնի քար, գուցէ և կայծքար»: Արմատական բառարանում՝ «մի տեսակ կարծր քար»: Ըստ Աճառյանի գալլախագ կազմված է գալլ և խագ ձևերից: Վերջին բաղադրիչի համար նշվում է պրս. xāz, «քար» զուգահեռը: Ծժժն պրս. xāz-ը ավանդված լինելը հին կամ միջինիրանական լեզուներում, ապա գալլախագ բառում նրա «քար» իմաստը կասկած չէր հարուցի. բայց հիմք ընդունելով պարսկերենում այդ բառի առկայությունը, կարելի է ենթադրել նաև միջինիրանական լեզուներում նրա գոյությունը (այդ լեզուներից է գրաբարի իրանական փոխառությունների գերակշիռ մասը):

Գալլախագի առաջին բաղադրիչը ուսումնասիրողները համարում են գալլ-ը (կենդանի): «Բառիս այս կազմությունը,—նշում է Հ. Աճառյանը,—արդյունք է մի հին ավանդության կամ հավատալիքի»¹⁶: Այդ հավատալիքի վերաբերյալ հղում է Աբեղյանի մի աշխատությունը: Ահա Աբեղյանի նկատառումը. «Կայծակը բոլոր դեմքի հետ միասին ոչնչացնում է գալլերին, ուստի և կայծակի խորհրդանիշ կայծքարն ու հրահանը գալլերից պաշտպանվելու միջոց են: Կայծքարն ինքը կոչվում է նաև գալլախագ (գալլ պատառող կամ նաև գալլերին հրկիզող)»¹⁷:

¹³ Նույն տեղում, էջ 327:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Տե՛ս Արմ, գալլախագ բառը:

¹⁷ Մ. Աբեղյան. Երկեր, հ. է, Երևան, 1975, էջ 92:

Անշուշտ, ժողովրդական ավանդությունները նպաստում են բառաքնական և աշխատանքներին: Բայց քանի որ բառաքնական ոչ մի եզրահանգում չի կարող վերջնական լինել դոնե իր մանրամասների մեջ, ուստի փորձենք առաջարկել գալլախազ բառի նոր ստուգաբանություն: Մեր կարծիքով առաջին բաղադրիչը՝ Գալլ, նշանակում է «քար»: Գրաբարում առկա է այդ արմատի հնչյունափոխված տարբերակը՝ գլի «քար»: Սա հ.-ե. ժազումով, բնիկ հայերեն բառ է. «Ոչ գիլս արձակեցին, ոչ դամուրսն փակեցին» (Ա. Մակր. Բ. 9): Այլ լեզուներում Աստվածաշնչի համապատասխան հատվածի գիլ բառի փոխարեն լաւ է: («Но они не ответили им, ни даже каменя не бросили на них»). հռ. Նիծու... և այլն: Գիլ «քար» կա և Հ. Մամիկոնյանի գրքում. «Եւ արք բերդին ընդդէմ ելեալ քարամբք և զօք յանխնայ կոտորեցին զնոսա»: Թիսկ արք ամրոցին ելեալ զկնի՝ նետիւք և պարսաքարամբ և զօք կոտորեցին արս երկու հազար և ութ հարիւր»¹⁸:

Այս օրինակներից էլ զգացվում է, որ գիլ-ը կարծր քարի տեսակ է: Գալլ «քար» իմաստի անուղղակի փաստարկ կարող է լինել և Պարխար լեռան Գալլախազուտ անվանումը. «Պարխար լեռը ԺԱ դարուն գալլախազուտ կրսուէր»¹⁹, ի դեպ, գալլ բաղադրիչով մի շարք տեղանուններում ենթադրելի է «քար» իմաստը՝ Գալլահոփիտ, Գալլաբլուր, Գալլատուն²⁰, Վ. Զիհանյանը իր մի հոդվածում կասկածի տակ է առնում նույնիսկ Գալլ դետի անվանման դալլ (կենդանի) բաղադրիչ իսկությունը²¹:

Ինչ վերաբերում է գալլ-գիլ հնչյունափոխությանը, ապա դա հաստատում է Գալլաձուր-Գլաձուր օրինակը:

Կշտամբել

Գրաբարում ունի «հանդիմանել, սաստել, պատուհասել» իմաստները: Արմատական բառարանում բառը ստուգաբանված չէ: Գ. Զահուկյանը, նշելով մոտ երկու տասնյակ բառեր, որոնց աղբյուրը կարող են լինել խեթա-լուվական լեզուները, բերում է և կշտամբելը. խեթ. kušduyal «կշտամբել, նախատել, անվանարկել, զրպարտել»²²:

Հայերենում այս ամբ-ձևույթը առկայանում է սակավաթիվ բառերում, որոնք էլ իրանական փոխառություններ են (ստամբակ, ապստամբել): Այս առանձնահատկությունը հաշվի առնելով, կշտամբել-ի համար կարելի է ենթադրել իրանական աղբյուր:

Բառի բուն արմատը թերևս կուշտ՝ «կող»-ն է: Առաջին հայացքից կուշտ «կող» և կշտամբել «հանդիմանել» իմաստների կապը կարող է անհավանական թվալ, սակայն պետք է նկատել, որ գրաբարում մարմնի մաս արտահայտող բառերին (տարբեր ձևույթների համադրությամբ կամ հարադրությամբ) խորթ չեն նմանօրինակ կիրառությունները. այտ «թուշ»-այտնուլ «ուռչել», բեւան-բմբեւանել «լռեցնել», բուռն-բմբռնել «հասկանալ» Վիգ-ընյվգել «ըմբոստանալ»-վզանումն «ամբարտապանություն»: Իմաստային այսօրինակ անցումները ավելի ցայտուն են արտահայտվում ժողովրդական-

18 Հովհաննու Մամիկոնյանի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ. Վենետիկ, 1832, էջ 27, 48:

19 Հ. Հյուրչյան. Հին հայոց տեղվո անունները. Վիեննա, 1907, էջ 131:

20 Այդ տեղանունները տե՛ս Բ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986:

21 Վ. Զիհանյան. Հայկական լեռնաշխարհի մի քանի դիտանունների ստուգաբանությունը. «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 4, էջ 128:

22 Գ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն (նախադրային շրջան), էջ 314:

սակցական լեզվում և բարբառներում²⁵, և բացառելի չէ, որ դրանց մի մասը ափսոսելիքով է գրաբարից:

Լուշտ բառին համանիշ կող բառով ունենք կողը քեմ տալ համառել» կողի րնկնել, կողը հաստ և այլն: Բերես կուշտ «կող» արմատից է բարբառային կոշտ-կոշտ ւանել «կոպիտ խոսել» (Վրբ.), կոշտել «անպատվել, հանգիմանել»²⁶, Լշտավրելի համանիշ լանդիմանել-ում դարձյալ մարմնի մաս արտահայտող ղեմ բառն է:

Արմատական բառարանում Աճառյանը բերում է և կոշտ «գուղձ, հոդի կարծր կտոր» արմատը՝ համեմատելով վրացերենի կուշտի «դաժան, խիստ, կոպիտ», Վրացերենի ձևը և իմաստը կարելի է բխեցնել ոչ թե կոշտ-ից, այլ կուշտ «կող»-ից:

Վերը նշել ենք, որ ամբ ձևությամբ առկայանում է իրանական փոխառություններում, քանի որ կշտամբ իրանական ձևը վկայված չէ, գուցե և այն հայերենի ձևով է (դործիական հոլովի ցուցիչ):

Մաֆալուկ

Այս թռչնանունը վկայված է Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայում»։ «Քան-
զի ոչ ի գնացս ինչ բաղում վայրեաց տուեալք են ոտք և ոչ ի պէտս որսոյ,
որպէս ծիծառանց և այլոց թռչնոց, որ անուանեալ կոչին մաքալուկք»²⁵։ Ար-
մատական բառարանում ստուգաբանված չէ։ Նկատելով, որ բառի հունարեն
համապատասխանակը ὄρεστρον-ն է, որ ծագում է ὄρεστρον «մանգաղ» լա-
ոհից, Աճառյանը գրում է. «...ըստ այդմ արդյոք հայ բառն էլ պետք է հաս-
կանալ մանգաղուկ»²⁶։ «Վեցօրեայի» քննական բնագրի ծանոթագրության
մեջ նշվում է, որ ըստ բանասեր Թորոսյանի «Արտիստի փոխարեն թարգ-
մանիչը կը դնէ մաֆալուկ»²⁷։ Զ. Գրեպպինը նկատում է, որ մաֆալուկ թռչ-
նանվան միջին հայերենյան տարբերակը մանգաղաքն-ն է և բերում է հետևե-
լալ վկայությունը Հովհաննէս Վարդապետի տաղերից.

Մանկղաթեին պիտի խղճալ
ինքըն չկարէր նըստէր ի վայր²⁸,

Արտիստի, մանգաղաք համանիշները, իրոք, հուշում են, որ մաֆալուկն
էլ կապ ունի մանգաղ բառի հետ։ Մաքալուկը ծիծեռնականման մի թռչուն է,
որի թևերը նման են մանդաղի։ Մանգաղ բառը ասորական ծագում ունի՝
māḡḡā (հնագույն ձևը՝ māḡḡā)՝²⁹։ Այս բառով և -ուկ- ձևով թուր-
քերայի» հայ թարգմանիչը կերտել է նոր բառ՝ մաֆալուկ թռչնանունը:

Պարագանի

ՆՁԲ-ում բառը ավանդված չէ։ Արմատական բառարանը, վկայակոչելով
երկու այլ բառարանների, տեսնում է «ստամբակիլ» իմաստը։ Քանի որ

²⁵ Մարմնի մասեր արտահայտող բառերով բաղմամբիվ փոխաբերացված օրինակներ տե՛ս
Ա. Ս ո լ ք ի ա ս յ ա ն, Ա. Գ ա լ ս տ յ ա ն. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան.
Երևան, 1975:

²⁶ Տե՛ս Ա. Ա մ ա տ ու ն ի. Հայոց բառ ու բան. Վաղարշապատ, 1912:

²⁷ Բ ա ռ ս ե ղ Կ ե ս ա ռ ա ջ ի. Յաղազս վեցօրեայ արարչութեան, աշխատասիրությամբ
Կիմ Մուրադյանի. Երևան, 1984, էջ 257—258:

²⁸ Տե՛ս Արմ, մաֆալուկ բառը:

²⁹ Բ ա ռ ս ե ղ Կ ե ս ա ռ ա ջ ի, էջ 358:

³⁰ J. A. C. Greppin. Classical and Middle Armenian bird names. New York,
1978, p. 160.

³¹ Տե՛ս Արմ, մանգաղ բառահոգվածը:

բնագրային վկայություն չկա, դժվարանում է բառիմաստային և ստուգաբանական հավաստի մեկնությունը: Բառաձևային յուրահատկությունը թույլ է տալիս, սակայն, հավաստելու բառի իրանական բնույթը: Ամենայն հավանականությամբ երկրորդ բաղադրիչը՝ գան, իրան. *zadan* «խփել, զարկել» բայի ներկայի հիմքն է՝ շձՈ, հիմատ. Ղինեգան և գինեհար հոմանիշները: Առաջին բաղադրիչի համար ենթադրելի է *pada* «ոտք» բառը: Ը միջձայնավորային դիրքում դառնում է *r(r)* հիմատ. *apadana*— հայ. ապարանք: Իրանական այդ արմատն է նաև պարսիական «կապանք, շղթա», *pada* «ոտք», *banda* «կապ» (ոտնակապ) բառերում:

Ուրեմն՝ կարելի է ենթադրել, որ պարսկացի(ել)-ի նախնական, ստուգաբանական իմաստն է «ոտքով հարվածել», իմաստային զարգացմամբ՝ «ըմբոստանալ, խրոխտանալ»:

Պարսկացիները և՛ բառակազմական, և՛ բառիմաստային ու իմաստափոխության առումով ճիշտ և ճիշտ համապատասխանում է ոտնանալ-ին: Ի դեպ, նույն *padā* «ոտք» բառն է տեսնում Ջ. Բոլոնիեզին հրապարակապ, փոկ» բառի մեջ, որը մեկ անգամ գործածել է Աղաթանգեղոսը, որը բերում է և Արմատական բառարանը: «Նւ բարկացեալ թագաւորն ետ պնդել զոտս նորա ի հրապարս տկաց և կախել զնա գլխիվայր»։ Բոլոնիեզին այլ լեզուներից զուգահեռներ բերելով հիմնավորում է ռաբ- կապ աղերսը³⁰:

Ս գ ա ծ ք

Բառը հանդիպում է Եփրեմ Ասորու «Վեշտասան ասացուածք...» գործում. «Իբրեւ ի վերայ եղբարց ձերոց, թուխս սգոյ զգեցաք, բայց ոչ հանդերձ թուխս զոր զգենուն սգածք վասն մեռելոյ, խորդք զգեցաք վասն սգոյ մաւրն»³¹: Ծանոթագրության մեջ հրատարակիչը նշում է, որ բառը գրաբարի բառարաններում վկայված չէ, ավելացնելով՝ «եթէ չէ ինչ վրիպակ, փխն. սգագգած»³²: Սգագգած-ը ՆՀԲ-ն մեկնում է՝ «զգածեալ սգով, զգեցեալ սուգ, սգապատ, տխրական»։ Բառը բաղկացած է սուգ և գգած(իլ) «հագնել», փոխաբերաբար նաև «անձի մեջ կրել, համակվել» բաղադրիչներից³³:

Մեզ հետաքրքրող սգած(ք) ձևը կարելի է չուղղել՝ սգագգած, այլ համարել նոր բառ, որի երկրորդ բաղադրիչը ոչ թե գգած-ն է, այլ ածեմ բայի ած հիմքը: Ած(ել)ը բազմաթիվ իմաստներ ունի, որոնցից՝ «բերել, ասել, պատել, կապել, անել, կատարել»։ Սգած-ի մեջ կարելի է տեսնել սուգ աստղ, կատարող իմաստը: Եթե մեր դիտարկումը ճիշտ է, ապա սգած պետք է բառաբանագրել որպես *V* դարի վկայություն:

Ի դեպ, *V* դարի մեկ այլ գործում՝ Եվսեբիոս Եմեսացու ճառերից մեկում կա սգածեալ ձևը, որը դարձյալ ՆՀԲ-ն չի վկայում. «...զի եթէ այսպիսի է տկարութեամբ սգածեալ...»³⁴:

³⁰ G. Bolognesi. Some Notes On Arm. hrāpar and its Etymology.—Annual of Armenian Linguistics, vol. 16, 1995, p. 1—11.

³¹ Տե՛ս «Սիոն», Երուսաղեմ, 1930, էջ 55:

³² Նույն տեղում:

³³ Տե՛ս Արմ, զգածիլ բառահոդվածքը:

³⁴ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1959, էջ, 172: